№ 38 Մարտի 3 (15) 1881 Մարտի 3 (15) № 38

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստորագրողներից պիտանի են ուզողին
Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յաջորդութիւն ընդունվում է ամեն յիզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
խրատանոց բաւին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաղտնական հեռագիր։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նոմակ Ալէքսանդրապոլից։ Նոմակ Լեռնային Ղարաբաղից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Թիւրքիա։ Գերմանիա։ Անգլիա։ Ֆրանսիա։ Նոմակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՆՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ

Ներքին գործերի մինիստրը հեռագրում է Կովկասեան փոխարքայի պաշտօնականարին մարտի 1-ին 1881 թ-ին։

Էյսօր, մարտի 1-ին, ժամը 1-ին և 45 րոպէին, ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ գինեխաղից վերադառնալու ժամանակ, կատարվեցաւ սպանութեան փորձ ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ սրբազան կեանքի դէմ, երկու ճայթող ռումբերի միջոցով։ Նրանցից առաջինը վնասեց Նորին Մեծութեան կառքին, իսկ երկրորդը ճայթվելով ծանր վէրքեր պատճառեց ԹԱԳԱՒՈՐԻՆ։ Վերադառնալով Զմեռնային պալատը, Նորին Մեծութիւնը բարեհաճեց ընդունել որ. Հաղորդութեան խորհուրդը և այնուհետև ի Տէր հանգաւ։ Զարագործներից մէկը բռնված է։

Ի Տէր հանգուցեալ Թագաւոր Կայսր ԱԼԷՔՍԱՆԴՐ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉԻ հոգեհանգիստը երէկ մարտի 2-ին, ժամը 1-ին կէսօրից յետոյ կատարվեցաւ Թիֆլիսի Սիոնեան մայր եկեղեցում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

17-փետրվարի

Ալէքսանդրապոլու հասարակութիւնը, ինչպէս, առհասարակ, ամենայն մի հասարակութիւն ունի իր անվերջ հոգսերը ու ցաւերը։ Մինչեւկրոց ուսումնարան ունենալու հոգս, քաղաքային մասնաճոգաբանի հոգս, մի գաւառական շտաբաբժիշկի ունենալու հոգս և ուրիշ շատ երկրորդական հոգսեր։

Մինչեւկրոց ուսումնարան ունենալու ձգտումը նոր չէ։ Նա տրգէն վաղուց գտնել է մի կատեր պահանջ մեր քաղաքի համար։— «Բէալական ուսումնարան, բէալական դպրոց....» այս էր խնդրում, այս էր ազազակում շարունակ մի քանի տարի մեր հասարակութիւնը, բայց գաւառան խոշոր ոգեներ տրգէլատիպեր էին հանդիսանում այս գեղեցիկ հիմնարկութեան իրագործմանը։ Հասարակութեան մեծ մասի անհասկացողութիւնը, մի քանի անարգ «գրամայուլիկների» տարերկրեայ ինտրիգանները, քաղաքային գլխոց զեկավարների բնաւորութիւնից զուրկ լինելը և ուրիշ մի քանի պատճառներ էլ, որոնց մի առ մի թվելը շատ հեռու կը տանէր մեզ, կարող են մի բառակապնին որոշ գաղափար տալ ընթերցողին յիշեալ խոչընդոտների մասին։ Այս յայտնի արգելակիչներից մի ամենանշանաւորն էլ կազմում էր, վերջին միջոց։ Ներսում, հետեւակ գժուարութիւնը։ Քաղաքից պահանջվում էր անպայման, որ նա պարտաւորվի՝ իրարանցիր տարի հատուցանել բացակայելի բէալական դպրոցին 7.000 բուբլի իրան նպաստ և վարձ ուսուցիչների տան համար, իսկ Ճեացեալ ծախսը բարեհաճում էր հոգալ ինքը՝ կառավարութիւնը։ Բարեբաստ հարց՝— ինչպէս անել։ Քաղաքը կարող էր տալ մի այդպիսի նշանաւոր գումար, թէ չը տալ։ Հարիւրվեցան քաղաքի ընտրվածները, կազմվեցաւ ժողով։ Երկար վիճաբանութիւնից, կամ, աւելի լաւ է ասել, երկար ազմուկից յետոյ, մի հատարակական վճռով վճռվեցաւ՝ տալ 7.000 բուբլին և ուսուցիչների տան վարձը։ Եւ այսպէս, ի վերջոյ, բարեվեցան մէջ տեղից բոլոր արգելքները։ Ուրեմն կարելի է հաստատապէս ասել, որ էլ խոչընդոտներ չեն պատահի և որ՝ Ներքոյ թիւ տեղեկագրեր ամառում տեղուշտ կը բացվի մեր քաղաքում բէալական դպրոց, և մեր քաղաքի մեղաւոր հասարակութիւնը վերջապէս կարժանանայ տեսնելու մի միջնակարգ և բարեկարգ ուսումնարանի երես։ Այս ամէն տասն և հնգից տրգէն սկսված է քաղաքային դպրոցի վերջին դասարաններում ֆրանսերէն լեզուի դասաւանութիւնը աշակերտներին բէալական ուսումնարանում ընդունվելու նախապատրաստութեան համար, ուր ֆրանսերէն լեզուն կը լինի մի պարտադիր ուսանելի լեզու։ Եւ սա այնքան հնարաւոր է, որքան՝ 2×2=4։ Եւ այսպէս միջնակարգ ուսումնարան ունենալու հարցը տրգէն մի վճռված հարց է։ Նա ինչպէս սովորաբար ասում են, տրգէն իր ոտն ու գլուխը հաւաքել է և հեռանում է անարձնութեան բեմից։ Հիմայ այս բեմի վրա մնում են երկու ծանրակշիռ հոգսեր, մասնաճոգաբանի և շտաբաբժիշկի հրատարակելու հոգսեր։

Մասնաճոգաբանի գաղափարը յառաջանում է այսուհետ ամենաքայլ և այս մեծաւոր գաղափարման հետ էլ, զուգընթացաբար, զարգանում է և ընթերցանութեան ճաշակը։ Նա հետզհետէ դառնում է, շատերի համար, մի կարեւոր պահանջ։ Բայց ուր գտնել բաւականութիւն այս մեծաւորական պահանջին։ Մեր քաղաքում գեռ ոչ էլ կայ մասնաճոգաբան։ Այս կարելի է մի փոքր զարմանալի թվի ընթերցողներին։ բայց ինչ ասած որ այսպէս է, յառաջադիմութեան նշան է։ Ճշմարիտ է մենք ունենք մի կլուբ, մի երեկոյի կլուբ, բայց սա էլ բոլորովին շեղված է իր ուղղութիւնից։ Սա չէ ծառայում իր նպատակին։ Սա բոլորովին կորցրել է իր կրթող նշանակութիւնը։ Լրագիրներ ստացվում են այնտեղ, այո, թէ հայերէն և թէ ռուսերէն, (ուրախ եմ, որ չեմ կարող հերքել այս իրողութիւնը), բայց հետաքրքրվող, բայց ընթերցող... Շատ քիչ անդամներից, մի քանի բացառութիւններ։—Զարան, այս տարի անդամ գրված էք կլուբին։—«Չէ. գրվեմ, ինչ անեմ. ես չեմ սիրում թղթախաղ։» Ահա թէ ինչ գաղափար են ստացել մեզանում շատերը կլուբի նշանակութեան վերաբերութեամբ։ խեղճեր.... կարծում են կլուբը թղթախաղի ասպարէզ է. և շատ իրաւունք ունեն այսպէս կարծելու։ Այնտեղ, ուր հասարակութիւնը պէտք է հետաքրքրվի լրագրների ընթերցանութեամբ, պէտք է ուսումնասիրի լրիւ գրականական երեկոների, տեսնում է միայն միշտ մի և նոյն թղթախաղը, մի և նոյն կոնծարանութիւնը. տեսնում է պարտահանգէտներ. երբեմն միայն ներկայացումներ։ Թէթեւ մեղաւոր են հիմա թիւր կարծիք ունեցողները, որ կրթող հիմնարկութիւնը փոխարկված է մի կատարեալ անթարայականացնող հիմնարկութեան։

Բայց ես շեղվում եմ բուն խնդրից։ Թողնենք կլուբը իր հանգրվանում յառաջադիմական ընթացքի մէջ և վերադառնանք դէպի մասնաճոգաբանի հարցը։

Այս կարեւոր հարցը հանդիսանում է մի տարի է, որ զբաղեցնում է շատերի մտքերը, և դարձել է նրանց համար մի մտատանջութեան առարկայ։ Հաւաքվել, խորհել, խօսել այս մասին շատ անգամ կատարված է։ Խօսք և խորհուրդ շատ, բայց կատարում բնաւ. դժուար է ասել գրականապէս, թէ ինչ վախճան կունենայ մասնաճոգաբանի հարցը, բայց այս միայն հաստատ է և անհերքելի, որ աշխատում են իրագործել և այս հանրօգուտ հիմնարկութիւնը։ Յանկանում եմ բոլոր սրտով աջողութիւն այն պարոնին, որ յանձնառու է եղել իր աշխատութեամբ գլուխ բերելու այդ բանը։ Մի քիչ էլ խոստումի քչութիւն և կատարման շատութիւն եմ ցանկանում։

Մի շտաբաբժշկի լրացիր հրատարակելու մտադրութիւնն էլ գրգռեցնում է այստեղ մի քանի ծանրակշիռ նշանակութիւն ունեցող անձինքների, և այսպէսով մի թերի ունենալը տրգէն կենտանական պահանջ է դարձել Ալէքսանդրապոլի համար։ Հաստատութեան կարիքը, հասարակական պահանջները օրըստօրէ բազմանում են, որոնցից և քանիներով մասն անգամ չենք տեսնում տրծարծված, քննագատված և պարզված թիֆլիսի ազգային պարբերական հրատարակութեանց մէջ։ Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել։ Ո՞ չ մի մայրաքաղաքի կամ կենտրոնական քաղաքի լրագիր չէր կարող նորիրել իր էջերը մի որ և իցէ գաւառի բազմաթիւ յարաւանների տարագրութեան։ Այսպիսի լրագիրները հարիւր զրաղված պէտք է լինէին, գլխաւորապէս, ընդհանրական հարցերով և չէին կարող հետեւել տեղագրվածի ուղղութեան։ Մանաւանդ «Մշակը», վերջին միջոցներում, մինչեւ բուլը թաղված նիւթի մէջ. հետզհետէ դժուարանում է գտնելը իր էջերում գաւառական թղթակցութիւնները։ Գաւառական թերթը միայն, մեր կարծիքով, կարող էր բարեհաջողութեամբ ծառայել գաւառական պէտքերին։ Եւ այս պէտքերը մեզանում անթիւ են։ Մի շտաբաբժշկան թերթի հրատարակութիւն, այո, կենտանական պահանջի չափ տարածական է Ալէքսանդրապոլի համար,—բայց հիրաւորապէս արդեւք այդ պահանջը.... դա ցոյց կը տայ մեզ մեծաւոր ապագան։

Հաշուելով թէ՝ տարեկան որքան ծախս է պահանջվում մի այսպիսի թերթ հրատարակելու համար, ճանաչելով այն անմեծաւորութիւնը, որ կամենում է դառնալ ինիցիատոր այդ թերթի հրատարակութեան գործին, աչքի առաջ ունենալով մեր հասարակութեան ներկայ մեծաւոր զարգացման աստիճանը, պէտք է ենթադրել որ Ալէքսանդրապոլում աւելի յաջողակ և նպաստաւոր պայմաններ կան մի գաւառական թերթի հրատարակելու համար, քան թէ ուրիշ գաւառական քաղաքներում։ Տեսնենք.....

Տեղացի

ՆԱՄԱԿ ՄԵՆ-ՂԱՐԱԳԼԻՍԻՑ

փետրվարի 18-ին

Ղարաքիլիսի օրիորդական դպրոցի բացման օրից իսկոյն առաջ եկաւ այն ցաւալի հանգամանքը, որ սեղական որբ և չքաւոր օրիորդները, նիւթական մեծագոյն չունենալով, զրկված պէտք է մնան կարեւոր դասախօսութիւնից, բարոյական կրթութիւնից և մանաւանդ ձեռագործութիւնից, որ գիւղական աղջիկների համար առաջին տեղն է բռնում։ Իմ ծանօթ կանանց հասարակութեան մէջ շատ անգամ տրծարծեցի այս միտքը. թէ պէտք է Ղարաքիլիսի որբ և չքաւոր օրիորդներին ոգնել ուսման գործում։ Շնորհակալ եմ, ասում գիտնցի, յարգելին իմ առաջարկութիւնը։

Անցեալ 1880 թ-ի յունվարի 1-ին կազմեցինք մի «որբասիրաց» ընկերութիւն, որոնցինք ամենաեռանդական 20 կոպէկ։—Ներկայ 81 թ-ի յունվարի 1-ին լրացած լինելով մեր ընկերութեան առաջին տարին, եւ, որպէս զանազան, պարտականութիւն եմ համարում, հրապարակաւ մի համառօտ հաշիւ ներկայացնել մեծապատիւ ընթերցողներին։—Ընկերութեան անդամահանգիստ թիւը լրիւ 30 է, բոլորն էլ իրանց տարեկան տուրքը (2 ր. 40 կ.) լրացրել են։ Ես յոյս ունեմ որ այս 81 թուում եւս մեր սիրելի ընկերութիւնները կը շարունակեն իրանց բարեգործական տուրքը։ Համոզված եմ որ Ղարաքիլիսի միւս կանայքն էլ կամաց կամաց կը մտնեն մեզ և գործին աւելի ոյժ և յաջողութիւն կը տան։

Մուտք. 1880 թ-ի յունվարի մէկից մինչեւ Ներկայ 1881 թ-ի յունվարի 1-ը անդամական տուրքերից գոյացել է 66 ր. 40 կ.։ Ղամասած քարեգրիչներից, մասիանոներից և քանանոներից ստացել է արդիւնք 2 ր. 20 կ.։ Նուէրք է ստացվել Ալէքսանդրապոլցի մի պարոնից 40 կ.։ Ուրեմն բոլոր տարեկան մուտքը կանէ 69 բուբլի։ Ցա խ ք. մնացած է արդեղրուհի օրիորդ ՑէրՂուկասեանցի գաղական պիտոյքների, հագնելիքների և այլ հարկաւորութեանց վրա 8 ր. 60 կոպէկ։

Ցախքը դուրս գալով մուտքից կը մնայ 60 ր.—40 կ. Այս մնացած գումարից 30 բուբլին տրուած է տոկոսով, իսկ 30 ր. 40 կ. մնում է գանձարանում ընկերութեան։—Վերջացնելով իմ համառօտ հաշիւը, ցանկանում եմ երկու խօսք էլ աւելացնել։ Ընկերութիւնը ի նկատի ունենալով իր նոր կազմված և ակար ոյժը, հարկաւոր համարեց առաջին տարին պահել միայն մի արդեղրուհի։ Բայց այսուհետ՝ եթէ միայն մեր բարեսիրաց ընկերուհիք չը հեռանային այս մեր խնդրից, ամենայն տարի կարող են պահել առանաւոր հինգ արդեղրուհի։—Առաջին տարին շատ տաք սրտով մտնեցան գործին մեր քոյրիկները, այս տարի տեսանենք։

Փեփրոնիա Տէր-Մելքիսեդեկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Молва» լրագիրը լսել է որ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Սաբուրովի հրամարկանից յետոյ այդ պաշտօնի ամենահաւանական կանդիդատը լինելու է բարոն Նիկոլայ։ Այդ պաշտօնեան մի ժամանակ ուսումնարանական շրջանի հոգաբարձուի պաշտօն էր վարում Կիովկասում։ Նա խիստ կլասիկական ուսման պաշտպան է և հակառակորդ է Իուստասեանի փոքր ազգութիւնների մայրենի լեզուի դպրոցների մէջ մացնելուն։ «Молва» լրագրի լուրը հաւատալի չէ. որովհետև դպրոցական գործին կենդանարար զարկ տալուց յետոյ. հազիւ թէ կառավարութիւնը կուզենայ կրկին վերադառնալ հանս Տոլստոյի սխալանքին, որ իր կոստատիր հետեւանքներն ունեցաւ։ Իուստասեանի ամրոցի ուսման կազմակերպութեան վրա։ Իսկ բարոն Նիկոլայ յայտնի է որպէս հետեւող Տոլստոյի ուղղութեան, և գուցէ կը գերազանցի էլ այդ վերջինին հին ուղղութեան մէջ։ Կիովկասցիները շատ լաւ են յիշում թէ ինչպէս էր ներգործում բարոն Նիկոլայ մեր դպրոցների վրա, թէ կատարեալ հրատարակութեան և անշարժութեան էր հասցրել նա մեր դպրոցները։ Եւ ոչ թէ միայն Լանդավսկու խելացի կառավարութեան ժամանակին, այլ մինչեւ անդամ Նէվէրովի ժամանակին մեր դպրոցները կրկին չունչ առան։ Նէվէրովն էլ բարոն Նիկոլայից յետոյ մեզ առաջադէմ և ազատամիտ մարդ երեաց։

—

ՄԵՍՊՈՂԱՐԱԳԻԼԻՍԻՑ ֆոնոգրաֆ են. «Վանանց ձորի ջուրը անցնելով Ղարաբիլիսայի մի թաղից, շատերը ամեն բանի համար այդ ջրից գործ են ածում բայց ասրարագրաբար մի քանի անհանգստացողներ թէ տաւարի ազդը և թէ այլ ապտեղութիւններ առանց մտածելու ամեն որ թափում են այդ ջրի մէջ և ապականում են ջուրը։ Այդ ջրի ափերում շատ անգամ թափված են ազդի կոյտեր, որից ջուրը մտցնելով մինչև գեղեցիկ է լինում։ Լաւում ենք որ նոր տաւարները մտցիր է արգելել ջրի մէջ ազդ թափելը և ափերում գտնված տաւարի ազդի կոյտերը հեռացնել է տալիս»։

—

Մեզ գրում են Մեծ-Ղարաբլիսայից որ այդտեղի հատարակական շտեմարանը արդէն պատրաստ է և բաւական արտանդէն հաւաքված է այդ շտեմարանի մէջ։

—

Մեզ գրում են ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ. «Մի քանի անձնաւորութիւններ, որոնց թւում և մի քահանայ, աշխատում են ամեն միջոցներով վնասել «Մշակին»։ Նրանք համարում են նրանց, որոնք իրանք ոչինչ համարձակութիւն չունեն, շրջանառել «Մշակ» լրագիրը։ Նրանք վրդովված են «Մշակի» դէմ, որովհետև այդ լրագիրը մինչև հարուածել է նրանց և նրանց նմանների հատարակական գործունէութիւնը»։

—

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը մարտ ամսի համար նշանակել է հետեւեալ տարկտաները վաճառատունցի առաջին պիտոյքի մթերքների վրա։ Յորենի ալիւրից թխած հացը առաջին տեսակի 5 կոպէկ ֆունտը, երկրորդ տեսակի 4 կոպ.։ Նոյն ալիւրից թանրի մէջ թխած հացը առաջին տեսակի 6 կոպ., ֆունտը, երկրորդ տեսակի $4^1/_2$ կոպ.։ լաւագոյն առաջին տեսակի ֆունտը 7 կոպ., երկրորդ $5^1/_2$ կոպ., երրորդ 5 կոպ.։ Ցաւարի մոր ֆունտը առաջին տեսակի 11 կոպ., երկրորդ 9 կոպ., տուկի 17 կոպ. ֆունտը, ոչխարի մսի ֆունտը 13 կոպ., խոզի 13 և 12 կոպէկ։ Այդ տարեան չէ վերբերվում գիւղական արդիւնաբերողներին, որոնք ժամում են իրանց արդիւնքները Թիֆլիսի հրապարակներում և վաճառատունցներում։

—

ԲԻԼԱՒԻՑ մեզ գրում են, որ Կամենկում եղանակը գարնանային է այժմ, ոչ մի տեղ ձիւն չը կայ, բայի տարերից։ Ցանքերը խուտանում են առատ թերը։ Կենտանական պտուղները էժանանում են։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻԱ

—

«Ռէյտերի» ընկերութիւնը հեռագրում են Կ. Պօլսից փետրվարի 25-ից։ Գեներալների գեղապանների մի քանիսը կարծում են, որ պէտք էր Յունաստանից սկզբից համաձայնութիւն առնալ, թէ նա կընդունի այն ժամանները, որ կը կայացնեն գեղապանները Կ. Պօլսի մէջ այժմեան բանակցութիւնների ժամանակ։ Միւս գեղապանները ընդհակառակը կարծում են, որ պէտք է զիջանելի երկիրների ազգաբնակութիւնը մեծամասնութիւնը յայտնել՝ արդեօք նա կամենում է, որ իր հայրենիքը միանայ Յունաստանի հետ, թէ մնայ թուրքական իշխանութիւնի տակ։ Արտաքին գործերի մինիստր Ասիմ փաշա իր խոստացութիւնը ժամանակ գեղապանների հետ յայտ է յայտնել, որ պատրաստ չեն պահանջի թուրքերից՝ սկզբից ցոյց տալ այն զիջումների չափը, որ նա անելու է յոգուտ Յունաստանի։ Այնու ամենայնիւ, ասել է մինիստրը, Բ. Դուռը մտադիր է մի քանի զիջումներ անել խաղաղութիւնը պահպանելու համար։

Լոնդոնի «Standard» լրագրին Կ. Պօլսից հեռագրում են հետեւեալը։ Բ. Դուռը հրաժարվում է կատարել պետութիւնների պահանջը, որ նա սկզբից որոշի զիջումների չափը յոգուտ Յունաստանի։ Դեսպանները այդ տեղեկութիւնը պաշտօնապէս ստացան։ Եւ ճշմարիտ, մի անկախ պետութիւն, որ խաղաղութիւնը պահպանելու համար և կամաւորապէս իր երկրի մի մասը տալիս է ուրիշ պետութեան, չէ կարող կատարել այդպիսի պահանջ։ Քանի որ յայտնվեցաւ, թէ Բերլինի կոնֆերենցիայի վճիռները պարտաւորեցուցիչ չեն, այլ խորհուրդների բնաւորութիւն ունեն, ոչ ոք իրաւունք չունի որոշել թիւրքաց զոհաբերութիւնների չափը։ Մի և նոյն ժամանակ այդպիսի քայլը արդէն կը դնէր բանակցութիւնների աջողութիւնը։ Այդ մտքով էլ կը կազմվի Բ. Դրան պատասխանը, եթէ նա հարկաւոր կը համարի գրաւոր պատասխան տալ և բերանացի յայտնութիւններով չի բաւականանայ։

Եանինայից «Polit. Corresp.» լրագրին գրում են, որ Թէսալիայի մէջ գտնված թիւրքաց զօրքերի գրութիւնը նոյնքան վատ է, որքան և Էպիրոսում։ Այդ երկու նահանգների մէջ թիւրք զինուորները ամենատրաժեշտ իրերի պակասութիւն են զգում։ Վատ եղանակից զինուորները տառնեանների մեռնում են մեծաքանակ։ Բացի յամառ ապրանքի զինուորներից, որոնք անգամ փախչում են, մեռնում զօրքերը նոյն զեղեցիկ յատկութիւնները ունեն, որով հիանում են եւրոպացիները։ Թիւրքաց զօրքերը խիստ զիջիպլինա են պահպանում, արհամարհում են վտանգը և ամեն բանին անտարբերաբանեամբ են վերաբերվում։ Ամենը համոզված են, որ թիւրքաց զօրքերը քաջութեամբ կը կռուեն, եթէ կը բացվի յոյն-թիւրքական պատերազմ։

Եանինայից «Standard» լրագրին հաղորդում են, որ անգլիական իշխանութիւնը կատարութիւնից հրամայեց ուսուցել ծախել պետական բոլոր կալուածքները և անյապաղ զէնքի հրաւիրել բաշիբազուկներին, որպէս զի թիւրքաց անկանոն զօրքերի թիւը գոնեա 6000 հասնի։ Մի քանի նահանգների մէջ թիւրքաց պահեստի զօրքերը հրաժարվեցան հաւաքվել կատարութեան կարգադրութեան համար։

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Ղարեբուռնա գերմանական պարլամենտի մէջ կարդացվում էր ներքին գործերի մինիստր կոմ Էյլենբուրգի օրինագիծը՝ գերմանիայի ինքնավարութիւն ունեցող հիմնարկութիւնների վրա հսկելու մասին։ Ընթերցանութեան ժամանակ իշխան Բիսմարկի հաւատարմատարը պարլամենտի մէջ կարդաց Բիսմարկի մի գրութիւն, որ շափագանց յարձակվում էր օրինագծի վրա։ Այդ հանգամանքը մեծ ազդեցութիւն գործեց պարլամենտի մէջ և առիթ տուեց ներքին գործերի մինիստրին հրաժարական տալ։ Այդ եղելութեան մասին լրագրների մէջ կարդում ենք հետեւեալ տեղեկութիւնները։ Բիսմարկ իր կարծիքները ներքին գործերի մինիստրի օրինագծի մասին պէտք է յայտնէր մինիստրների խորհուրդին և ոչ թէ պարլամենտին։ Քանի որ պետական կանցլերը իր կարծիքները հրապարակապէս յայտնեց, այդ կը նշանակի, որ նա կամենում է ազատվել այնպիսի մի մինիստրից, որ անկախ է գործում և ուշադրութիւն չէ դարձնում Բիսմարկի կամոյականութեան վրա։

Պրուսական մինիստրների անկախութիւնը միշտ ասելի է եղել իշխանի համար և նա այդ բանը շատ անգամ բացարձակ յայտնել է։ Կանցլերին միշտ աջողվել է մինիստրների ազատութիւնը ճնշել և նրանց իր օգնականներ դարձնել։ Միայն ծովային և պատերազմական մինիստրները ազատ են մնացել նրա ճնշումից։ Միւս մինիստրներից միայն կոմ Էյլենբուրգ չէր հպատակվել իշխանին, նրան իր գլխաւորը չը համարելով, այլ միայն նախագահ և առաջին մինիստր։ Իր վարմունքով պետական կանցլերը կամենում էր հեռացնել ներքին գործերի մինիստրին։ Եւ նա հասաւ իր նպատակին։

Թէպէտ կոմ Էյլենբուրգ հրաժարական տուեց, բայց կայսրը երկար ժամանակ չէր կամենում ընդունել նրա հրաժարականը։ Թէ կայսրը և թէ թագաժառանգը աշխատում էին, որ Էյլենբուրգ յետ առնի իր հրաժարականը։ Այդ նպատակի համար Բիսմարկ սահմանած էր յայտնել պարլամենտին, որ իր գրութիւնը ուզարկել էր ոչ թէ պարլամենտի մէջ կարդալու համար, այլ որ իր հաւատարմատարը այդ գրութիւնը ի նպատի առնէր իրրև հրահանգ և որ միրջինը սխալմամբ կարդացել էր գրութիւնը պարլամենտի մէջ։ Այդ մեկնութիւնը ոչ ոքի չը բաւականացրեց կայսրից սկսած մինչև պատգամաւորները և ներքին գործերի մինիստրը արդէն վերջնականապէս տուած է իր հրաժարականը։

Ներկայումս ամբողջ բնբրինը զբաղված է թագաժառանգի արդու հարսանիքով, որի համար մեծ պատրաստութիւններ են տեսնվում։

—

ԱՆԳԼԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալը։ Շատ դժուար է գնահատել այն փոփոխութեան նշանակութիւնը, որ պատահեց բրիտանական ատհմանադրութեան հետ վերջին երկու ամիսների ընթացքում։ Ամենքին յայտնի է, որ անգլիական համայնքների ժողովը երկրի իսկական կառավարութիւն է։ Այդ ժողովը միշտ վայելել է ազգաբնակութեան հաւատարմութիւնը և յարգանքը և նրա անդամները միացած են եղել, չը նայելով քաղաքական հանգամանքների զանազանութեանը։ Ամենահզօր մինիստրը այդ ժողովի հաւատարմատարն է եղել, միշտ ուսումնասիրել է նրա ցանկութիւնները և աշխատել է կատարել նրա կամքը։ Բայց մինիստրութիւնները աշխատել են յարգել համայնքների ժողովի փոքրամասնութեանը և պահպանել ժողովի ատհմանադրական բնաւորութիւնը։ Գլխաւորն մինիստրութիւնը բացառութիւն կազմեց, մեծ իշխանութիւն տալով ժողովի ատիկերին և նրան մի զօրաւոր զէնք գործածելով կատարութեան համար։

Դիպաւոր կարծում էր, որ իրլանդական ժողովուրդը նրան իր փրկիչ կը համարի, եթէ նա մի անելիք փոփոխութիւն կանէր 1870 թ. կալուածական օրէնքների մէջ։ Դրա փոխարէն իրլանդական ժողովուրդը սկսեց նրան թշնամի համարել և ընդդիմադրել։ Այդ հանգամանքից զրգռված և ի նպատակ առնելով Ֆորսթերի ապառնայիքը՝ հրաժարվել մինիստրի պաշտօնից, եթէ չը գադարեցնվի «Habeas Corpus» օրէնքի ոյժը։ Գլադստոն յայտնեց համայնքների ժողովին, որ նրան ոչ մի գործ չի առաջարկվի մինչև չը քննվին սահմանադրական օրէնքները Իրլանդիայի համար։ Դա մի ապառնալիք էր ժողովի և նրա փոքրամասնութիւնը կազմող իրլանդացի պատգամաւորների համար։ Այդ էր պատճառը, որ համայնքների ժողովը վերջին եօթ շաբաթների ընթացքում ծաղրանքում առաջ գարձաւ Եւրոպայի առաջ և նրա անդամները կորցրին իրանց արժանաւորութիւնը և մի քանի իրաւունքները, թէպէտ և ժամանակաւորապէս։

—

ՖՐԱՆՍԻԱ

—

Ալժիրի մէջ եղած անգլիական գեսպանի երկու հեռագիրները ֆրանսական օֆիցիներ Յունաստան ուղարկելու և ֆրանսական զէնքը յունական կառավարութեանը ծախելու մասին մեծ ազմուկ բարձրացրեց ֆրանսական պատգամաւորների ժողովի և սենատի մէջ։ Այդ երկու ժողովների մէջ էլ կառավարութիւնը հարցեր առաջարկվեցան։ Սենատի մէջ ընդդիմադրական կուսակցութեան անդամները՝ դուքս Բրոյլի, Օդիֆրէ Պասկիէ և Բիւֆէ սասաթիկ յարձակվում էին կառավարութեան վրա, պահանջելով նրանից խստագոյնս, թէ գաղտնաբար մեզ ասա էր, որ Յունաստանի հետ բանակցութիւններ սկսվեցան ֆրանսական օֆիցիներ ուղարկելու և զէնք ծախելու մասին։ Երկու ժողովների մէջ էլ կառավարութիւնը միասնակ բացատրութիւններ տուեց։ Մինիստրների նախագահ Ֆերրի ասաց, որ ֆրանսական օֆիցիներին ուղարկելը Յունաստան չչնչ նշանակութիւն չունէր, բացի այն, որ նրանք նպաստէին յունական զօրքերի կազմակերպութեան բարելաւութեանը։ Նշանակութիւն չունի նոյնպէս և հրացանների ծախելը։ Քանի որ պատերազմը յայտնված չէ, գինապահեստների գիրքերը չէ կարելի մեզագրել կողմնապահութեան մէջ, որովհետև նրանք օրէնքի համեմատ են գործել։ Կրի կառավարութիւնը տեղեկացաւ, թէ մի քանի տեղ զէնք է ծախված, նա իսկոյն միջոցներ ձեռնարկեց։ Ֆրանսական կառավարութիւնը հրաժարվեցաւ